

Տ. ԱՎԵՏԻՍ ԱԲԵՂԱ ՄԱՆԴԱԼՅԱՆ

Ն'այիսի 14-ին, կիրակի օրը, Հոգեգալստյան տոնին, Վեհափառ Հայրապետը Մայր տաճարում կուսակրոն քահանա ձեռնադրեց 1976—1977 ուսումնական տարվա հոգևոր ճեմարանի շրջանավարտ Սորին սարկավագ Մանդալյանին:

Տ. Ավետիս աբեղա Մանդալյանը ծնվել է 1954 թվականին Ռումինիայի Մեդիաշ քաղաքում:

Իր նախնական կրթությունը ստացել է Բլաշ քաղաքի նախակրթարանում, այնուհետև նույն քաղաքում ստացել է միջնակարգ կրթություն՝ 1973 թվականին:

1973 թվականին ընդունվել է Մայր Աթոռ ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան և այն ավարտել գերազանց հաջողությամբ 1977 թվականին:

1976 թվականի փետրվարի 1-ին սարկավագ է ձեռնադրվել՝ ձեռամբ Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթուրյանի:

Հոգևոր ճեմարանն ավարտելիս նրա դիպլոմային աշխատանքի թեման է եղել՝ «Սարգիս վարդապետ Շնորհալին և նրա՝ ս. Հովհաննես առաքյալի երեք թղթերի մեկնությունը» (68 մեքենագիր էջ):

1978 թվականի ապրիլի 13-ին հոգևոր ճեմարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ կայացած հանդիսության ժամանակ, տ. Ավետիս աբեղան հանդես է եկել իր վերոհիշյալ ավարտաճառի բանավոր պաշտպանությամբ, և այն քննիչ հանձնաժողովի կողմից գնահատվել է «գերազանց»:

Տ. Ավետիս աբեղա Մանդալյանը Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ այս ամռանը մեկնելու է Քոթայամ (Հարավային Հնդկաստան)՝ մալաբար եկեղեցու հոգևոր կենտրոն, տեղի հոգևոր ճեմարանում, իր աստվածաբանական ուսումը կատարելագործելու համար: